45. ԹՈՓԱԼ, ԿԸՌ ՈՒ ՔՈՌ ԱԽՉԻԿԸ

Կէղնի, չէղնի զանկին մարդըմ կէղնի ու մեկ տղեմ՝։ Տղեն է, օր կմեծնա, քյամրլ կէղնի, հոր վրեն կդնե օր զինք կարգե։

Հերն կասե.—Լաո՛, մաղամ օր դու կուզիս կարդվիս, ես ի՞նչ պիտի ասիմ, գնա քու սրտով ախչիկըմ իշքե, էրթամ հ՝ուզիմ, առնիմ հ՝իգամ։

Տղեն է, կէլնի քաղքի մեջ օլըրտի, օր ուրին ախչիկըմ գտնա, կէրթա բաղչեմ՝ կտեսնա, օր քոմըմ ախչիկ նստուկ ին էդ տեխ, ամ՝ան ախչիկըմ կա, քըրկեն հ՝առեջ, նըխշ կէնե օր մարթ տիլ ու մայիլ կմնա։

Կդառնա կիգա հոր կասե.—Ֆըլան բաղի մեջ ախչիկըմ իմ տեսի, քըրկեն հ՝առեջ նըխշ կէնե, գնա հ՝ուզե ընծիկ։

Հերն կէլնի կէրթա զէդ ախչիկ կուզե, կիգա կառնե կիգա, բըլե տղեն թանպիհ կէնե, թե՝ «Հ՝առջին գիշեր էդ ախչկա խեչ չքնիս, տես ազապ է, ազապ չէ, սորա գնա ուր մոտ»։

Տղեն կասե.—Թըղ էղնի։

Հ՝իրկուն օր կէղնի, կբերին զախչիկն ու զտղեն մեկտեխեն, տղեն կքաշե զթուր, դնե ուր ու ախչկա մեջտեխ։

Տղեն օր զթուր կքաշե դնե ուրանց հ՝որթալըխ, ախչիկ ձեն չհանե, տղեն կհասկնա օր ախչիկ ազապ ախչիկ չէ։

Կէլնի զէնի կթողե։

Զէն ախչիկ օր կթողե, մեկ լէ կէլնի հ'ընկնի մըջ քաղքին, ուրին ախչիկ կփնտրե։

Կէրթա բաղչիմ' հ'ըռաստ կիգա, կտեսնա օր էդ քաղքի ախչիկներ հ'ըմեն հանդ ին հ'ոդի, որն օր ծաղիկ կքաղե, որն օր բանջար, ախչիկըմ կա նստուկ ծառու տակ, բեհրսապ խորոտիկ է։

Կդառնա հ'իգա, հոր կասե.—Ֆըլան տեխ ախչիկըմ իմ տեսե, դնա հ'ուզե ընծիկ։

Հեր կէլնի կէրթա ղէն լէ կբերե։ Հարսնիք կէնին կխըլըսին։

Հեր մեկ լէ թանպիհ կէնե տղին. —Տղա՛ լաո՛, հ'առջին գիշեր քու կնկա խեչ չէրթաս, տե՛ս ազապ է, ազապ չէ, սորա գնա ուր մոտ։

Մեկտեխելու օր օր կիգա, տղեն էմ լէ կքաշե ղթուր դնե ուրանց մեջտեխ, ախչիկ ձեն չհանե, տղեն կհասկնա օր էդ ախչիկ լէ ազապ չէ։

Կէլնի լուսուն հոր կասե.—Աբո՛, վալլա՛յի, էդ ախչիկ լէ ազապ չէ։

Զէն լէ կթողե։

Էմ լէ կէլնի հ'ընկնի քաղքի մեջ, կէրթա, ըստհաղ թագավորի ախչկան կհավնի։ Կդառնա կիգա հոր կասե.—Վալլայի՛, թագավորի ախչկան իմ հավնի, հ'էլի գնա հ'ուզի։

Հերն կհ'էլնի կէրթա, կուզե զթագավորի ախչիկ կառնե կիգա։ Հարսնեք կէնին կխըլըսին։

Հերն էմ լէ թանպիհ կէնե տղին, կասե.—Լաո՛, գիշեր օր կէրթաս քու կնկա մոտ, տես ազապ ախչիկ է, ազապ ախչիկ չէ, սորա գնա ուր մոտ։

Գիշեր օր կէղնի, ախչիկն կտանին օր մեկտեխին, ախչիկ կըզառկի բերե տղեմ'։

Օր կբերե տղեմ' յալվար յախա կէղնի իրկան, կասե.—Մա՛րդ, քու բախտն իմ հ'ընկի, ասսու սիրու խաթրի համար էղնի, զէդ ձեն դուրս չէձգիս։

Օր յալվար յախա կէղնի, տղեն լէ ձեն չհանե, կէրթա կնիկըմ կանչե բերե, կէղնի դայեկ, զճիժ կառնին։

Կէլնի լուսուն, հեր կասե.—Լա՛ո, իմա՞լ է։

Կասե.—Շատ աղեկ է, ես էդոր կհավնիմ։

Կառնեն զիրար ու կէղնին հ'իրարու իրիկ ու կնիկ։ Կընցնի ժում ու ժամանակըմ, տզի հերն ու մեր կընկնին մեռնին, կմնան տղեն ու ուր կնիկ մենակ։ Տղեն է, նը՛ գիր գինա, նը՛ կարդալ,

ձեռքեն լէ ուրիշ գործ չիգեր։ Հերն օր կմեռնի, էդ անահուն գոլ-վրթի մեկ գլխեն կմտնի, մեկ գլխեն կէլնի դուրս, ի՞նչ ասեմ, զհոր ունեցած չունեցած կուտե, կընկնի հ՚ետին հաց։

Կնիկն է, էդ նեղութենի մեջ, իրկա վրեն կդնե.—Անկարելի՞ է, ընծիկ թագավորական հալավ չբերիս, քու տուն չըմ կանի։

Իրիկն կասե.—Կնի՞կ, մ՚էլի մ՚ըլի, մենք օրական հաց չկառնանք բերինք մըր ձեռք, ես թագավորական զադ, թագավորական հալավ քզիկ հ՚ուսդե՞ն բերիմ։

Կնիկն իսկի անկաճ չէնե, կասե.—Զունի՞ս, էկո գիրըմ գրիմ իմ հոր քյաթըպին, գնա էնդոր խեչ աշխատի։

Կըսե.—Թըղ էղնի։

Կնիկն է, կէլնի, գիրըմ կգրե հոր քյաթըպին, թե. «Հանդ է զիմ իրիկ ճամբի էկավ. հ՚ուր օր շաթին դեխըմ կա, դիր հ՚ոնի. թըղ աշխատի, բալքիմ մեռնի, մենք առնեք զիրար»։

Էդ տղեն լէ, օր էղեր էր էդ ախշկա, էդ քյաթըպի մոտեն էր։

Տղեն է, նը՚ գիր դինա, նը՚ կարդալ, կառնե զգիր, կտանե իտա քյաթըպին։

Քյաթիպն է, օր զախշկա գիր կառնե, հ՚ուր օր դժար տեխըմ կա, հ՚ոնի կդնե զտղեն աշխատի։

Տղեն է, թառլալա ապրեր էր, շարաթըմ օր կէրթա աշխատի, ձեռքեր կրղբճին, էլ չը կոնա էրթա աշխատի։ Կիգա շուկեն, կդնե զձեռներ թևու հ՚ետև, կէրթա շուկի լենք ու հ՚էրկենք կիգա։ Օրըմ շիվար-շիվար կօլըրդեր, հալվոր հայըմ էկավ էդ տզին հ՚ըռաստ, ճանչցավ օր ֆըլան մարդու տղեն է. կկանչե զտղեն, կառնե կէրթա ուր դուքան, կասե.—Էկո՞, քզիկ բանըմ կասիմ։

Կառնե կէրթա. օր կտանե, կասե.—Տղա՚ լաո, էդ ի՞նչ է էղի քզիկ. էկեր իս հըմլա փարիշան-փարիշան, դրեր իս զձեռներդ թևուդ հ՚ետև կէրթաս ու կիգաս, էդ քու ձեռներն ի՞նչ է էղի։

Տղեն կպատմե.—Կարգվա, առա զթագավորի ախշիկ, ունեցած ու չունեցած կերա, ընկա նեղութենի մեջ, հըմկա գրեր է վրը ընծիկ. «Իլլա՚յի, կէրթաս ընծիկ թագավորի զադ, թագավորի հալավ կբերես, թը չէ՝ քու խեչ չըմ կանի»։ Հ՚էլավ ճամբեց զիս, էկա օր ուր հոր քյաթըպի հ՚առեջ բանիմ՚ առնիմ ուրեն թագավորական զադ, թագավորական հալավ, էրթամ։ Քյաթըպ լէ հ՚ուր օր շաթին տեխըմ կա, դրեց զիս օր աշխատենք. շաբաթըմ աշխատա, ձեռներս բղբճան, էլ չգացի բանելու, ընկեր իմ շուկի լենք ու հ՚էրկենք կօլըրտիմ։

Կհանե քանիմ՝ փարա էդ հալվոր, կիտա տղին, կասե.—Գնա՛ քզիկ հաց ու պանիր առ ըրի, նստի իմ դուքնի մեջ կի, հար ես էրթամ տուն ու դառնամ հ'իգամ։

Կէրթա տուն, կառնե խորոտիկ խոթրմ փետ ու կիգա, կասե տղին. —Ինչ օր ասիմ, ղիմ խոսք կէնի՞ս։

Տղեն կասե.—Հա՛, հ'ո՞րի չէ։

Կիտա զփետ, կասե.—Կառնիս զէդա փետ, կէրթաս։ Օր կէրթաս, հանդ է էնի թարանճի գլուխ կիգա քու հ'առեջ, կասե. «Մարդ, ընծիկ թագավորական զգեստ, թագավորական եմակ բերի՞ր»։ Դու ասե. «Հա՛, քելէ էրթանք հ'օղեն, իտամ»։ Կրռնիս ձեռքեն, կառնիս էրթաս ներսնտուն, ղծամեր կփաթիս վըր քու մատներուն ու կզարկիս, քանի էդա փետ չկոտրեր է, կզարկիս, եր օր կտոր-կտոր էղավ փետ, նոր կթողիս։

Տղեն է, կէլնի առնե զհալվորու փետ, դառնա հ'իգա ուր տուն։

Օր կիգա կէլնի թարանճեկ, կնիկ կիգա հ'առեջ.—Մա՛րդ, ընծիկ թագավորական զգեստ, թագավորական եմակ բերի՞ր։

Տղեն կասե.—Հա՛, քելե էրթանք ներսնտուն, հանիմ իտամ։

Կրռնե ձեռքեն, կառնե հ'իգա ներսնտուն ու զփետ կքաշե, կընկնի կնկա կողեր.—Ա՛ռհա քզիկ թագավորական զգեստ, ա՛ռհա քզիկ թագավորական եմսկ։

Աղեկըմ զկնիկ կծեծե։ Հըմալ կծեծե, օր մեռել, կնիկ անդունդ կընկնի, բերնեն արուն կէրթա, փետ կէղնի կտոր-կտոր, նոր կթողե։

Կթողե հ'իգա հալվորու խեչ։ Հալվորուն կասե.—Քու հ'ուզածի պես էրեցի, նոր էկա,—զփետ լէ կցուցու, կասե,—հ'էդա մնաց։

Հալվորն կասե.—Շա՛տ աղեկ ես էրի, իսկի մը՛ վախենա, ինչ օր էնին քզիկ, ես հ'ոտա իմ։ Էղավ օր թագավոր լսեց, մարդ ճամբեց զքզիկ առավ գնաց, դու ասե՝ «Իմ կնիկն էր, ծեծեցի, դու զքու կնիկ հ'էլնիս ծեծիս, ես կը՞ռնամ հ'իգամ ասիմ՝ հ'ո՞րի ծեծեցիր»։ Ձէն կէրթա թագավորին, թե չասիս՝ «Քու փեսեն զքու ախչիկ հըմալ ծեծեր է օր հալ չկա վրեն. օտաց վրեն չկառնա կանի»։

Թագավոր կէլնի, մարդ ճամբե, կասե.—Գացե՛ք, տեսեք օղո՞րդ է, առեք զախչիկն ու էկեք։

Կիգան կտեսնան օր օղորդ է, կվերցուն զախչիկն հըմալ մեռուկ, կտանին, կթալին թագավորի խեչ ու կիգան։

Զէգ օր կտեսնա թագավոր, կասե.—Գացե՛ք, առեք զէն տղեն ու էկեք։

Խավրզները կիգան գտնան զտղեն, կառնեն կէրթան, հալվոր լէ հետ ուրանց կէլնի կէրթա, կասե.—Տղա՛, լառ՛, մը վախենա, ես քու հետն իմ։

Կառնեն զտղեն կէրթան թագավորի խեչ։ Օր կառնեն կէրթան, թագավորն կասե.—Տղա՛, լառ՛, էդա ախչկա հանցանքն ի՞նչ է օր դու էդա հըմլա անաստվածնակ ծեծեր իս։

Տղեն կասե.—Թագավո՛ր ապրած, թագավոր՝ հ՚էրկրի թագավորն է, իրիկ լէ՝ կնկա թագավորն է, իմ խոսքով չըր նստեր-կաներ, ես լէ ծեծի, հըմկա դու զքու կնիկ ծեծիս, ես իրավունք ունի՞մ, ասիմ՝ զքու կնիկ հ՚ո՞րի կծեծիս։

Թագավորն կասե.—Օր հըմալ է, էլ զիմ ախչիկ չըմ իտա տանիս, կառնիմ քու ձեռքեն, գնա՛ քզիկ ուրիշ կնիկ գտի, առ ու գնա։

Թագավորն օր հըմալ կասե, հալվորն կիգա հ՚առեջ, կասե.—Թագավո՛ր ապրած, մըր բերնեն հ՚էվել է քու հ՚առեջ խոսանք, բըլե կխոսանք՝ շանդարդի ինք էղի։ Մատամ օր զքու ախչիկ կառնես տղի ձեռքեն, պետք է զտղի տներ լէ հետ առնիս։

Քյաթըպն էնդիեն կթռնի կասե.—Զախչիկ լէ ես կառնիմ, զտղի տներ լէ, ի՞նչ կասես, դու հալվոր։

Քյաթըպն է, չէ՞, ինչխըդար օր գացեր է տղի հոր մոտեն փարա բերեր էր, զփարի տեխ տեսեր էր, էնոքի կասեր՝ ես կառնիմ։

Զտղի հոր փարի տեխ հալվոր լէ գիներ, բըլե տղեն չըր զիներ։

Ինչ գլխու ցավանք էնեք, գին ու բազար կէնին, վացուն հազար օսկի, զտղի տներ կիտան քյաթըպին։

Հալվորն է, կասե.—Զկես փարեն տուր, կէրթանք զմըր խաբ ու խաճաղ միշեն դարտկենք, քաշենք ուրիշ տունըմ, էկո մտի մեջ։

Օր կառնեն զփարեն, կէրթան, հալվոր կդառնա վըր թագավորին, կասե.—Թագավո՛ր ապրած, իմ գիցածով էդա տղի հոր հ՚իսուն հազար օսկի լէ, փոխ փարա քու մոտ կա, զէն լէ տուր, սորա կէրթանք։

Զէն լէ կառնեն, կէղնի վացուն հազար օսկի, կէլնին կիգան։

Կիգան, հալվորն կասե.—Տղա՛, գնա շուկեն հինգ տաս իրղատ, հինգ տաս փետատ գտիր առ ու էկո։

Տղեն կէրթա հինգ իրղատ, հինգ փետատ, հինգ թիակ կառնե ու կիգա։ Կիգան կէրթան տղի տուն։

Հալվոր չէ՞ գինա աղի հոր փարեն ինչ տեխն է, կէրթա զէն տեխ իտա իրղրտներուն փորել։

Կփորե, կհանե յոթ կուկում օսկի, կիտա իրղրտներու շալակ, կճամբե էրթա ուրանց տուն. օր կտանին տուն խըլըսին, էլ բան չմնա տան մեշ, կտանին զբալնըկներ թասլիմ էնին քյաթըպին, կառնին զուրանց հիսսուն հազար օսկին լէ, կդառնան հ՚իգան հալվորու տուն։

Քյաթըպն է, օր զբալնըկներ կառնե, կէլնի առնե զկնիկն ու դեմ կիգա բազրկնի տղի տուն։ Կասե.—Էրթանք զբազրկնի խազինեն հանինք, նստինք ու մզիկ խոլա-խըռմա ուտինք, քեֆ էնինք։

Կիգան տուն, կբանան զդուռ, կէրթան վըր բազրկնի խազինա հ՚օդասին, խազինի հորերու վրեն։ Ի՞նչ տեսնան աղեկ է, կտեսնան օր բազրկնի խազինեն յոթ տեխով հորուկ է էղի, հանած ին, տարած։ Կմտածին, կմտածին տեխ բը տեխ փաթլամիշ կէղնին քյաթըպն ու թագավորի ախչիկ։

Լուսուն օր կէղնի, թագավորին է հազար բան ու գործ կա, իրղրտներ կիգան օր էրթան բանին, կիշքին կեսօր էղավ ու քյաթըպ չկա։ Հար կեսօրվան կիշքին՝ քյաթըպ չկա, կէրթան թագավորին կասին.

— Թագավոր ապրած, էդա էղավ յոթ սահաթ իրղրտներ էկած ին, կանած դուռ, քյաթըպ չկա, հրաման էրե թըղ էրթան կանչին հ՚իգան։

Հրաման կէնե, կասե.—Գացե՛ք կանչեք. օր զդուռ չբացին, կոտրե՛ք զդուռ, մտե՛ք ներս, զորով քաշեք ձեռքեն, առեք էկեք։

Կէլնին էրթան զարկին, զարկին ձեն չկա, զարկին, զարկին ձեն չկա, ճար ուրանց կկոտրի, զդուռ կկոտրին, կմտնին ներս, հ՚ուր օր կօլըրտին, չկառնան քյաթըպ գըտնան, կէրթան ներքին դին տեխըմ, կտեսնան օր, քյաթըպն ու թագավորի ախչիկ գրկած ին զիրար ու հ՚ընկած ին վըր հողուն, տախտի մեշտեղ։ Կէրթան ջուհապ տանին թագավորին,՝թե՝ «Ջասիս, գացինք զարկինք զդուռ, ձեն չտվին. կոտրինք զդուռ, մտանք ներս, գացինք տեսանք, օր ախչիկն ու քյաթըպ մեռուկ, գրկած ին զիրար ու հ՚ընկած վըր գետնին»։

Թագավորն կասե.—Տեխ ուրանց էն է, թողեք էն մախսում տղի աթն էր հ՚էլավ, հ՚երևան լէ մէրթեք, թողեք թըղ էրթան մնան ուրանց տեխ։

Դառնաք մենք հրմկա վրր տղին։ Տղեն է, նը՛ գիր գինա, նը՛ կարդալ, աստված հրմալ հոր իսկի խեր չի տա։

Հալվորն կասե.—Զէդա զանկնութեն բերիմ թասլիմ էնիմ էդա տղին, վաղ կուտե կխրլսցու, մեկ լէ կընկնի նեղութենի մեջ, կէղնի մզիկ մուր ու մկրատ. կրերե ղտղեն թաժա կիտա կարդացնել, տղեն կասե.—Դու դինաս, ի՞նչ կէնես՝ էրե։

Հալվորն է, կէլնի քաղքներ գիր գրե, հ՚ուր օր աղեկ վարժապետրմ կա հինգ-վեց վարժապետ կքոմե, կառնե հ՚իգա։

Կիգա զէդոնց հախ կկտրե, զտղեն կիտա մոտ ուրանց կարդալ։ Թե ամիսրմ, թե էրկու էդ վարժապետներ դաս կիտան տղին, տղեն կէլնի ֆիլ-ֆիլ վարժապետներուց աղեկ կկարդա։ Օր տղեն աղեկրմ զուր կարդալ թաքմիլ կէնե, հալվորն կիտա ղվարժապետներու հախ, կճամբցու կէրթան։

Զվարժապետներ օր ճամբու կդնե, կէրթան՝ տղին կասե.—Տղա՛, ես միտք ունիմ զքզիկ կարգիմ, ի՞նչ կասիս։

Տղեն կասե.—Դու գինաս, հար հ՚էսօր ինչ օր ասեր իս, ես քու խոսքեն ե՞ր իմ հ՚էլի։

Կասե.—Ընծիկ ախչիկրմ կա, քոռ է, թոփալ է, լալ է, կուղի՞ս գնա իշքե, սրտովդ է, կհավնիս՝ առ, չը՛ս հավնի՝ մ՚առնի։

Հալբուքի ախչկա պես խորոտիկ չկեր, մտուկ էր ներս, դուրս չը հ՚էլներ։

Տղեն գնաց, զախչիկն օր տեսավ, խելք գնաց գլխեն, ընկավ գետին։

Ախչիկ հ՚էլավ էկավ, քիչրմ ջուր սրսկեց տղի հ՚էրսի վրեն, ուշք բերեց հ՚ինք։ Ասեց.—Տղա՛, քզիկ ի՞նչ էղավ։

Տղեն ասեց.—Քու հեր ասեց. «Ընծիկ ախչիկրմ կա՝ հա՛մ քոռ, հա՛մ թոփալ է, հա՛մ լալ է, գնա իշքե, կհավնի՞ս՝ իտամ քզիկ»։ Ես էկա տեսա օր դու նը՛ քոռ իս, նը՛ թոփալ իս, նը՛ լալ իս, խելքրս գնաց, հ՚ընկա գետին։

Ախչիկն ասեց.—Տղա՛, լաո՛, մարդրմ օր ուր տեխեն չէլնի օլրրտի, բռնավորի պես մնա ներս մտուկ, թոփալ չէ, ի՞նչ է։ Մարդրմ օր մարդու հետ չխոսա՝ լալ չէ, ի՞նչ է։ Մարդրմ օր մարդու հ՚էրես չտեսնա, լուս ու արև չէլնի՝ քոռ չէ, ի՞նչ է։

Տղեն թորկեց էկավ, ախչկա հորն ասեց.—Կառնիմ։

Օր ասեց կառնիմ, բերեց զհարսնեք բրռնեց, զախչիկ տվեց տղին։

Ինչ խըտար հարստութեն օր տղին կեր, ինք լէ էն խըդար ուր ախչկա հետ դրեց, ձեռքըմ լէ տուն շինեց, առանց դռան, զտղեն ու զախչիկ դրեց մեջ, մենակ տան մեջ լեն սրախըմ շիներ էր· օր ախչկա սիրտ նեղենա, հ'էլնի օլըրտի, ֆառալամիշ էղնի, մեկ լէ հ'իգա մտնի ուր հ'օդեն։

Տղեն է, զախչիկն օր առավ, խլըսավ, ժում ու ժամանակըմ մնաց, զմիտք փոխեց, ասեց.—Վալլա՜յի, պիտի հ'էլնիմ, էրթամ հաճութենի, քիչըմ լէ աշխըրքներ օլըրդիմ, դառնամ հ'իգամ։

Կէլնի կէրթա շուկեն օր զուր ճամբու թաղարուկ տեսնա։ Կէրթա օսկերչու դուքանըմ կտեսնա օր հավքըմ կա էդ տեխ։ Կասե.—Էդա հավու գին քա՞նի փարա է։

Օսկերիչն կասե.—Քամբախ տան հայ ծռե՞ր է, էդի հա՞վ է։

Տղեն կասե.—Ըպա ի՞նչ է։

Օսկերիչն կասե.—Զը՛ս տեսնա, էդի բլբուլ ի, էդոր գին քսան օսկի է։

Տղեն կասե.—Շատ աղեկ է օր բլբուլ է, ես կէրթամ հաճութենի, իմ կնիկ կմնա մինակ, բազի-բազի հետ կժղլի, հետ զօր կընցու, հար ես դառնամ հ'իգամ։

Կառնե զբլբուլ կիգա, բըլե տղեն դինա բլբուլի մարիֆաթն, կբերե տուն, ու ինք կէլնի լուսուն կբառնա զուր բեռներ ու կիտա զճամբխի հ'առեջ, կէրթա հաճութենի։

Տղեն կէրթա, կնկա սիրտ կնեղենա. օրըմ կէլնի դուրս, էդ սրախի մեջ կօլըրդի, թագավորի տղեն կիգա կընցնի, աչք կընկնի կնիկ, ուշք կընցնի, հ'ընկնի գետին։

Ջուհաբ կտանին թագավորին, թե՝ «Զասի՞ս, քու տղի ուշք հ'ընցեր է, հ'ընկեր է գետին, ֆըլան տեխ»։

Մարդ կճամբե, կառնե զտղեն ու կէրթա, ուշք կբերեն հ'ինք։

Հերն կհարցու, կասե.—Տղա՛, քզիկ ի՞նչ էղավ։

Կասե.—Թագավո՛ր ապրած, վալա՜յի, գացի ֆըլան տեխեն կընցնեք, աչքս առավ կնիկըմ, օր սրախի մեջ կէրթեր-կիգեր, ուշքըս գնաց, հ'ընկա գետին, հըմկա էն կնիկ օր չէզնի՝ անկարելի՛ է, ես սաղ չըմ մնա։

Հերն կասե.—Գացե՛ք, զդուռ ու հ'էրդիք քակեք, առեք զէդ կնիկն ու էկեք։

Կէլնին կէրթան, կիշքին օր դուռ չկա էդ տան, կդառնան հ'իգան։

Թագավորին կասեն.—Էդ տան դուռ չկա, չորս պատ ու կնիկ մտուկ է ներս։

Կասե.—Տարեք պզտիկ թոփըմ, դրեք մեկ կշտեն, ղարկե փըլուցեք, զորով քաշեք, առեք էկեք։

Ինչ թոփ օր կտանեն դնեն, չարա չէղնի, կէրթա խուրխուշուն կառնե պատին ու կդառնա հետ, թոփ չբանի։

Կիգա պառավըմ, կասե.—Թագավո՛ր ապրած, ընծիկ չարխերով չաքմաճեմ՝ շինե, ես առանց ըլլելու կէրթամ առնիմ զէդ ախչիկն ու հ՚իգամ։

Կշինին զպառվու հ՚ուզած չարխերով չաքմաճեն ու թասլիմ կէնին պառվուն։

Պառավ կառնե, կէլնի կէրթա, կդնե պատի տակ ու մեկըմ ներքեանց զչարխեր կդառնու, կէլնի մտի ներս, կէրթա կնկա խեչ, բարև կիտա։ Կասե.—Քուրոշ ախչիկ,—զինք կէնե ախչկան մորքուր։

Ախչիկն կասե.—Ասսո՛ւ բարին,—տեխ կնստի։

Օր կնստի, քիչըմ կմնա, կասե.—Ջիմ տղեն հ՚էլեր իմ կկարգիմ, զէրկու օտք դրեր է մեկ սոլ, կասե չուրի իմ մորքուրոշ ախչիկ չիգա, իմ գլխու վրեն պսակ չդրվի։

Ախչիկն կասե.—Նստի՛, կէլնինք էրթանք։

Մորքուրն կասե.—Հ՚էլի շուտ էրե, հարսնխուրեր զիմ տուն ավիրեցին, էդա իրեք օր ուտելով ու խմելով։

Վեհասըլ, ախչիկն հար զպառավ կնստցու, կրերե խահվա կէփե կխմցու, կես օր կէղնի։ Կէլնի, կհագնի զուր շորեր, կշորորա, կիգա օր բլբուլի հ՚առշևով հ՚ընցնի էրթա, բլբուլին կասե.—Մանցի՛ բարով։

Բլբուլն կասե.—Խաթո՛ւն, էրթաս բարով, հ՚ո՞ւր կէրթաս։

Ախչիկն կասե.—Իմ մորքրոշ տղեն կպսակին, կէրթամ հարսնիք։

Բլբուլն կասե.—Կէրթաս դու գինաս, մինակ քիչըմ վըր էնա քուռսուն նստի։ Քզիկ մասալեմ՝ ասիմ, սորա գնա։

Պառավն կասե.—Չէ՛ չէղնի, կէլնենք էրթանք, հ՚անդան է, հ՚անգրցանք, հարսնած մզիկ կիշքե։

Խանումն ասեց.—Չէ, չուր անկաճ չէնիմ զիմ բլբուլի խոսքն, չը՛մ հ՚իգա։

Խանում կքաշե զաթոռք, կնստի, բիլբուլն բաշլամիշ կէնե, կասե.—Խանո՛ւմ, ժամանակին ախչիկ ու տղեմ՝ հ՚իրարու վրա

սիրահարուկ կէղնին, հար իմալ կէնին, տղեն չկառնա ղախչիկ առնե, մեր չթողեր օր առներ։ Էդ ախչկա մեր կմեռնի, ախչիկ ջուհար կէնե՝ հ՚անդե իմ մեր մեռեր է, յոթն օր թըման կէրթանք դերեղմներ, վըր գերեզմնին. դու լէ էկո էնտեխրանք օլըրդի, կառնինք ղիրար ու կէրթանք։

Յոթն օր կթմի, կիրակմտին ախչիկ կէլնի կէրթա էն տեխրանք օլըրդի. օր կէլնին կնկտիք դառնան կիգան, տղեն կիգա կրոնե ախչկա թևեն ու կէրթան։ Շատ կէրթան, քիչ կէրթան, կիգան ծովում՝ պռուկ կտեսնան, օր կյամեմ՝ կա էդ տեխ կանուկ։ Կյամիչուն կասե.—Հ՚իջու ղթարանճեն դիր ծովու պռուկ, հ՚էլնենք մըտնենք ներս։

Կյամիչին կիջու ղթարանճեն, դնե ծովու պռուկ, կասե.—Հ՚առջին հեղ թըղ ախչիկ հ՚էլնի մտնի, սորա՝ դու մտի։

Ախչիկ օր կէլնի մտնի, կյամիչին հուշիկըմ ղթարանճեն կքաշե վի ու զտղեն կթողե ծովու պռուկ ու զկյամու շրրդրներ կքակե։

Շատ կէրթա, քիչ կէրթա, կյամին կէրթա քաղքիմ՝ հ՚առեջ կկանի. օր կկանի, ախչկան կասե.—Դու մանցի հ՚ոդա կյամու մեջ, ես կէրթամ էդա քաղքի մեջ, առնիմ տերտերմ՝ հիգամ, պսակվինք, առնինք զիրար, էրթանք։

Ախչիկ կասե.—Թըղ էղնի, ես ի՞նչ եմ ասի, դո՞ր պիտի էրթամ, ես քզիկ, դու ընծիկ, գնա ա՛ռ ու էկո։

Կյամիչին էր օր գնաց, հեռեցավ, ախչիկ զկյամու գլուխ դարձուց հ՚ուր վեր էկեր իր, ընդիով դարձավ հետ։

Օր ասեց՝ դարցավ հետ, բլբուլն ասեց.—Խանո՛ւմ, ախըր էս օր մթնեց, հ՚էլի գնա քու տուն, նոր հ՚էլի, լուսուն գնա։

Խանումն ասեց.—Մորքո՛ւր, բլբուլ օղորդ կասե, աստված շնորհավոր էնի, կուզիս հ՚էլի գնա, դու զքու տղեն պսակե, ես վաղ կիգամ։

Պառավն հ՚էլավ նստավ ուր չարխի մեջ, դարձավ էկավ, ասեց թագավորի տղին.—Հեչ խասավաթ մ՚էնի, վաղ, աստուծով, կառնիմ, կիգամ։

Գնաց ուր տուն պառավ, քնավ, լուսուն հ՚էլավ էկավ։ Ասեց.—Հ՚էլի էրթանք, ի սեր աստծուն էղնի, էդ հարսնած զիմ տուն ավիրեց, մեռնիմ իմ քուրոջ ախչկան, շո՛ւտ էրե, էդ շան լակոտ զէրկու օտք դրեր է մեկ սոլ, իլա՛յի իմ մորքուրոջ ախչիկ չի գա՝ չը՛մ պսակվի։

Կասե.—Դը՛, մորքո՛ւր, նստի, նստի ուտինք մզիկ քիչըմ հաց, սորա էրթանք։

— Քա մեռնիմ իմ քուրոջ ախչկան, ի՞նչ հաց է, ի՞նչ հալ է, շուտ էրե էրթանք։ Հըմկա հարսնվորները զիրար կուտին, մարդ չկա իմ տուն։

— Բան չէղնի, նստի բրդուճըմ հաց ուտինք, հ՚էլնինք էրթանք։

Կնստի, կուտին լողմեմ՚ հաց, կէլնին օր էրթան, կիգան թարանճեսներուց կհ՚իշնին։ Բլբուլն կասե.—Օղորդ օր, կնիկ ազգին իթիպար չկա։

Խաթունն կասե.—Հ՚որի՞ն, բլբուլ։

— Ըպա,—կասե բլբուլ,—ես հ՚էրեկ մասալըմ պատմի քզիկ, չհարցուցիր էդ ախչիկ իմա՞լ էղավ, իմա՞լ չէղավ վըր ծովուն։

Խաթուն կասե.—Բլբո՛ւլ, խուրբան իմ քի, աֆ կէնիս, մոռցեր ենք, իմա՞լ էղավ։

— Նստի, թարիֆ էնիմ։

Խաթունն է, քաշեց զաթոռք ուր տակ։

Բլբուլն ասավ.—Ախչիկն է, շատ գնաց, քիչ գնաց վըր ծովուն, գնաց տեխըմ զուր կյամին կանկըցուց ու հ՚իշավ կյամուց հ՚էլավ դուրս։ Օր հ՚էլավ դուրս, տեսավ էնդիեն մարդըմ կիգա, էկան, էկան զէդ ախչիկ բռնեց ու առավ գնաց։ Էդ մարդ լէ ուխտ էրեր ի, օր քառսուն հատ՚ ազապ ախչիկ չգտնա, կնկա խեչ չպառկի, հ՚եռսունուին ախչիկ գտեր էր, մանցեր էր մեկ. զէդ ախչիկ տարավ՚ էղավ քառսուն, օր տարավ, ախչիկն ասեց. «Մա՛րդ, դու հար հ՚էսօր սարու մարդ ես էղի, սար ու ձորն ես օլըրդի, հ՚էլի՛, գնա՛ աղեկըմ համամլանմիշ էղի, սորա էկո մտի քու յաթաղ»։ Մարդն հ՚էլավ գնաց օր համամլանմիշ էղներ, ախչիկն վերցուց զէգ հ՚եռսունուին ախչկներ՚ ասեց. «Էրթանք քիչըմ օլըրդինք ու դառնանք հ՚իգանք» ու հ՚ընկավ սարեր։

Օր ասեց հ՚ընկավ սարեր, մութ զգետին առավ, բլբուլն ասեց. —Իմ մասալն խըլըսավ։

Ախչիկն ասեց.—Մորքո՛ւր, հ՚ըմեն-հ՚ըմեն հ՚էսօր լէ մթնեց, հ՚էսօր լէ հ՚էլի գնա, լուսուն խերն հաղ կիգամ։

Պառավն է հ՚էլավ մտավ ուր շարխի մեշ, դարձավ էկավ, ասեց թագավորի տղին.—Լուսուն խերն հաղ կբերեմ, էդա էրկու օր բըլբուլըմ՚ էղեր է սատանա, մասալ կասե, չթողե հ՚իգա, հ՚էսօր մասալն խըլըսավ, վաղ կառնեմ կիգամ։

Գնաց ուր տուն պառկավ քնավ։ Հ'էլավ լուսուն նստավ ուր չարխի մեջ ու հ'էլավ մտավ ախչկա խեչ, ասեց.—Ցամա՜ն, քուրոջ ախչիկ, էդ ի՞նչ է կէնիս իմ գլուխ էդա էրկու օր, շուտ էրե, հ'էլնինք էրթանք։

Ախչիկ էմ լէ ղպառավ նստցուց, կերան-խմեցին, կես օր էղավ։ Կեսօր օր էղավ, հ'էլավ շալվորվավ ու հ'ընկավ պառվու հ'ետև, էկավ օր թարանճից կիջներ, բլբուլն ասեց.—Օղորտ օր հում կաթ ուտողին էթիպար չկա։

Ախչիկն ասեց.—Իմա՞լ բլբուլ։

Բլբուլն ասեց.—Ըպա ի՞նչ, ես հ'էրեկ քեզ բան ասի, դու չհարցուցիր. «Բլբուլ, էդ քառսուն ախչիկ օր հ'ընկան սար ու ձոր, իմա՞լ էղան, հ'ո՞ւր հ'էլան դուրս»։

Ախչիկն ասեց.—Բլբուլ, խուրբան էղնիմ քեզի, մոռցեր ենք, աստված սիրիս, իմա՞լ էղավ։

Ասեց.—Նստի, թարիֆ էնիմ։

Պառավն ասեց.—Քուրոջ ախչիկ, էդ բլբուլին անկաճ մ'էնի, հ'էլի էրթանք։

Ախչիկն ասեց.—Ջուր իմ բլբուլի հեքիաթն չխըլըսի, չըմ հ'իդա, կհ՞ուզիս դու գնա, շնորհակալ իմ, ես չըմ իգա։

Առավ աթոռքըմ ու նստավ։

Բլբուլն ասեց.—Խանո՛ւմ, էդ ախչիկներն է, հ'ընկան սար ու ձոր գացին, քառսուն մարդու հ'ըռաստ էկան, քառսուն լէ թըֆընկով, քառսուն լէ հարամի։ Էդ հարամեքն է, օր տեսան ղէդ ախչըկներ, ուրանք՝ քառսուն, ախչկներ՝ քառսուն, էկան բռնեցին ղախչկներ օր տանեն։ Ախչիկն ասաց.—Ջանըմ, գուք քառսուն լէ սարու մարդ իք էղի, հար հ'էսօր կղտոտ, չըպռոտ, հ'իշեք էդա տեխ լոխկըցեք, հ'էլեք փոխեք ղձըր հալվըներ, էկեք առեք զմզիկ, մենք էլ հ'ո՞ւր կէրթանք։

Ախչիկն գէդ քառսուն մարդ լէ համոզեց, հ'իջան օր լողկընեն. ջուր մտան, զուրանց հալվըներ ձիանք ու թըֆընկներ թողին ախչըկներու մոտ, շապկանց ու թումբնով գացին ծովու պռուկ։ Հարամեք օր գացին, հ'էլան քառսուն ախչիկ լէ հագան զէդոնց հալվըներ, առան զէդոնց թըֆընկներ ու հեծան զձիանք, ընկան ճամբախ, գացին։ Գացին, քաղաքըմ հ'էլան դուրս։ Էդ քաղքի թագավոր լէ նոր էր մեռի, դալվաթ խուշի թողած էն, վիր գլխու վրեն օր նստեր, կբռնին, կէնին ուրանց թագավոր։ Գացին խանիմ՝ մեջ

հ՝իշան, ղուրանց ձիանք կապեցին ու էկան էդտեխ կանան օր դալ-վաթ խուշի կթողեն։ Դալվաթ խուշին օր թողին, էկավ նստավ էդ ախչկա գլխու վրեն։

Էդ քաղքի մախլուխ ասեց.—Ջանը՝մ, էդի չէղավ, էդի խարիբ մարդ է, հ՝որի՞ն մըր մեջ թագավորցու չկա՞, խարիբ էնինք։

Էկան էդ տեխեն ղախչիկ քշին, գնաց զհեռուն կանավ, մեկ լէ ղղալվաթ խուշին թորկին, գնաց, նստավ էդ ախչկա գլխու վրեն։ Էդ տեխեն լէ էկան քշին։ Ջանդարդի էղավ ախչիկ, առավ զուր հ՝ընկերներ, գնաց մտավ ուր խոնախխանեն։ Օր գնաց մտավ ուր խոնախխանեն, զդալվաթ խուշին թորկին, օլբրդավ, օլբրդավ, ղախչիկ չգտավ, գնաց ախչկա խոնախխանեն գտավ, փանջարից մտավ ներս, գնաց ախչկա գլխու վրեն նստավ։ Էլ ճար ուրանց կկտրի, կքոմին հ՝երկրացիք վիրարու, կասին՝ բալքիմ աստծուց է։ Կրոնին, տանին, դնին ուրանց թագավոր։

Կասե.—Խանո՝ւմ, օր մութ առավ գետին, իմ հեքիաթ խըլը-սավ։

Խանումն կասե.—Պառա՝վ, ախը՝ր, մթնեց, հ՝էսօր չէղնի. հ՝էսօր լէ հ՝էլի գնա, լուսուն հ՝էլի էկո խերն հաղ, կհ՝էլնինք էր-թանք։

Պառավն է, մեկ լէ քոռ փոշման, հ՝էլավ նստավ ուր չարխի մեջ, դարձավ էկավ։ Գնաց թագավորի տղին ասեց.—Հ՝ըմե՛ն, հ՝ը-մե՛ն համբերեր իս, հ՝էսօր լէ համբերե, վաղ անպատճառ կբերիմ։

Հ՝էլավ գնաց ուր տուն, պառկավ քնավ. լուսցավ, հ՝էլավ էկավ, մտավ ուր չարխի մեջ, հ՝էլավ մտավ ախչկա խեչ։

Ասեց.—Քուրոջ ախչիկ, ախըր հրմլա չէղնի. կիգաս, ղաթի հ՝էլի էրթանք, չըս հ՝իգա, ասե՝ չըմ հ՝իգա, հ՝էլնիմ թորկիմ էրթամ։

Ախչիկն ասեց.—Մորքո՛ւր, նստի խերն հաղ հ՝էսօր կիգամ։

Ջպառավն նստցուց, հար բրդուճըմ հաց կերան, էղավ կեսօր։

Հ՝էլավ շալվորավ, հ՝ընկավ պառվու հ՝առեջ օր էրթեր, բլբուլն ասեց.—Օղորտ օր կասին՝ կնկա գլուխ խելք չկա։

Ախչիկն ասեց.—Բլբո՛ւլ, խուրբան էղնիմ քզիկ, հ՝ո՞ւրին հրմալ կասիս։

Բլբուլն ասեց.—Ըպա իմա՞լ էնիմ, ես քզիկ հ՝էրեկ բան ասի, դու չհարցուցիր՝ բլբուլ, էդ ախչիկ օր թագավոր էղավ, իմա՞լ էղավ, իմա՞լ չէղավ։

Ախչիկն ասեց.—Հրմկա ասե։

Պառավն ինքնզինք կջրխջրպեր ինքզինք կվերցուցներ զարկեր

ունտին։ Ինք զուր միս կուտեր, ախչիկ անկաճ չէրեց, ասեց «Մոր-քո՛ւր, հոգիկ, չուր իմ բլբուլ ղուր հեքիաթ չխըլըսցու չըմ հ՚իգա»։

Քաշեց ղաթոռք ու նստավ։

Բլբուլն ասավ.—Ախչիկն է, օր թագավոր նստավ, քաշեց զուր պատկերք զարկեց հ՚աղբրի վրեն ու խարախոլըմ դրեց հ՚աղբրի մոտ, ասեց. «Որն օր էկավ ջուր խմեց, իշքեց էդա պատկերքի թա-րաֆ, ախ էրեց՝ բռնեք ու առեք էկեք իմ խեչ»։

Ավուրըմ մեկ, էդ կյամիչին օր առեր է ղախչիկ ծովու պըռկեն փախի, էկավ էդ հ՚աղբրի վրեն խմեց ջուր, իշքեց պատկերքի դին, ախըմ քաշեց։ Օր քաշեց, բռնին առան գացին թագավորին, թագա-վոր ասեց. «Տարեք զէղի թալեք ախոռ, էրկու խարախոլ դրեք վրեն օր չփախնի, օրական լէ էրկու հաց կիտաք ուրին ուտե, օր չմեռնի, հար կանչիմ հարցում տեսնամ հ՚ո՞րի ախ քաշեց»։

Քանիմ՝ օր հ՚ընցավ, ըստհաղ եռսունինը աղապ աղչկներու տերն էկավ, խմեց ջուր, իշքեց պատկերքն ի վեր ու խորուն ախըմ քաշեց, խարախոլներ տեսան, բռնին առան գացին թագավորի մոտ։

Թագավորն ասեց. «Զէդ լէ ուրիշ ախոռըմ տարեք թալեք, էր-կու խարախոլ դրեք վրեն օր չփախնի»։

Շաբաթըմ հ՚ընցավ, ըստհաղ քառսուն ջալալիքն էկավ, մեկ-մեկ խմեցին ջուր ու իշքեցին պատկերքն ի վեր, ա՜խ քաշեցին, խա-րախոլներ տեսան, բռնին առան գացին թագավորին։

— Ջէնդոնք լէ տվեց հապս։ Մնաց ժում ու ժամանակըմ, ըստ-հաղ տղեն էկավ, օր առեր էր ղախչիկ ու փախի։

Էկավ, բռնին առան տարան թագավորին մոտ։ Թագավոր ասեց. «Զէդ լէ տարեք հ՚օդեմ՝ էրեք, բըլե հաց բոլ իտաք ուրին ուտե, հար կանչիմ, հարցում, տեսնամ հ՚ո՞րի ախ քաշեց»։

Տղեն օր էկավ խըլըսավ, թագավորն է, մեկ-մեկ զէգ ախ էնողներ կանչեց, բերեց ուր հ՚առեչ։ Հ՚առջին հեզ զկյամիչին բե-րեց, ասեց. «Քու դարդն ի՞նչ է օր էկար էդա հ՚աղբրի վրեն խմե-ցիր ջուր ու ա՜խ քաշեցիր»։

Կյամիչին ասեց. —Ավուրըմ մեկ, իմ կյամին ծովու պռուկ կանուկ էր, մեկ լէ տեսնամ տղեմ՝ ու ախչիկըմ էնդիեն էկան, էդ ախչիկ շատ տեսքով էր, խաբեցի, ղթարանճեն դրի, ախչիկն հ՚է-լավ մտավ ներս, տղեն մնաց դուրս։ Օր ախչիկն հ՚էլավ մտավ ներս, զտղեն թողի ծովու պռուկ ու զկյամին թողի, էկա քաղքիմ՝ հ՚առեչ հ՚էլա դուրս։ Զախչիկ թողի կյամու մեջ, գացի օր քաղքեն

տերտերրմ բերենք պսակվենք, ախչիկն է, դու ղադ մը մնա, դարցու զկյամու գլուխն ու փախի, տեսա էդ պատվերք, մաներ այնի էն ախչկա պատվերք, ա՜խ քաշեցի»։

Տղեն լէ հոդ բերեր էր կանկցուցի, անկաճ կէներ, ասեց. «Դու քաշվի կանի էնա տեխ։ Ըստհաղ զմեկէլ մարդն առեք էկեք. քառսուն կնկա տեր»։

Խավըղները գացին առան ու էկան։

Թագավորն ասեց.—Դու հ՚ո՞րի ախ էրիր։

Մարդն ասեց.—Ես ուխտ էրեր ինք օր չուրի քառսուն ալապ ախչիկ չառնեք, իմ յաթախ չէրթենք։ Օրըմ գացի ծովու պռուկ կոլըրդենք, տեսա օր ախչիկըմ հ՚էլավ կյամուց էկավ։ Վալայի, իմ բան էղավ։ Պատմի էդ ախչկան զիմ միտք։ Ախչիկն ասեց. «Ես էլ քու ձեռքեն հ՚ո՞ւր կռնամ էրթամ, քիչմ՚ զնա համամլանմիշ էղի, էկո մտի քու յաթախ»։ Ես գացի օր համամլանմիշ էղնենք, հար դառցա էկա, տեսա օր նը՛ ախչիկ կա, նը՛ իմ հ՚էռսունուին ախչիկն են հ՚ոդի. ախչիկ առեր էր զհ՚էռսունուին ախչիկ, փախե, տեսա հ՚աղբրի վրավու պատկերք մ՚աներ էն ախչկա պատկերք, ա՜խ քաշեցի, բռնեցին առան էկան քու մոտ»։

Ասեց.—Զէդ լէ տարեք էն ղին։

Ըստհաղ էկան քառսուն հարամիք։ Թագավորն հարցուց, ասեց.—Դուք հ՚ո՞րի ախ քաշեցիք։

Հարամիքն ասին.—Թագավո՛ր ապրած, օրըմ ավ ու խուշի գացեր ենք, դարցանք էկանք, կէրթենք մըր տուն, հ՚ըռաստ էկանք քառսուն ախչկա։ Ասինք. «Զմըր գտանք, բռնինք առնինք էրթանք, էնինք մզիկ կնիկ»։ Էդոնց մեջ ախչիկըմ կեր, հ՚առեջ էկավ, ասեց. «Դուք հար հ՚էսօր էղեր իք սարու մարդ, լըպռատ ու շրպռոտ, հ՚իջեք գացեք, էդա տեխ գոլըմ կա, լողկցեք, էկեք առեք զմզիկ ու էրթանք։ Մենք լէ ավտրցանք, թողինք զմըր հալվըներ, թըֆընկներ ու ձիեր էդ ախչկներու խեչ, շապկանց ու թումբնով գացինք օր լողկնենք, դառնենք հ՚իգենք, առնենք զէդ ախչկներ ու էրթենք։ Դարձանք էկանք, տեսանք օր՝ նը՛ ձի կա, նը՛ թրֆանկ, նը՛ հալավ ու նը՛ ախչիկ։ Հագած ին զմըր հալվըներ ու առած զմըր թըֆընկներ ու ձիեր, գացեր ին։ Էկանք էդա հ՚աղբրի վրեն, խմինք ջուր, աչք մի առավ էդա պատվերք, մ՚աներ էդ ախչկա պատվերք, ա՜խ քաշեցինք։

Թագավորն ասեց.—Զէդոնք լէ տարեք էնդին, օր տարան, ասեց.—Զէնա հ՚առջին էրկու մարդու գլուխ տարեք զարկեք։

Առան գացին զկյամիչու ու ղքառսուն ախչկա տիրոջ գլուխ զարկին։

Բերեց ղհեռսուն ու ին ախչիկ տվեց հարամիններուն, մեկ մնաց պակաս, զէն լէ նոր գտավ, ասեց՝ «Դը՛, դուք գացեք»։

Էնդոնք օր գացին, էլ մարդ չմնաց դիվընի մեջ, հ՝էլավ հանեց զուր հալվներ, տղին ասեց. «Ես էն ախչիկն իմ, դե՛, զիմ\գլխու գալած հասկցա՞ր»։ Բերեց զուր թագավորական հալվներ հագուց էրկան, զիրիկն էրեց թագավոր, ինք էլավ թագուհի ու նստան էնա դին,—բլբուլն ասեց,—իմ հեքիաթ խըլրսավ, խաթուն, դը՛, հ՝էլի, գնա՛։

Հըտ ասելուն, բաղրկան զարկեց զդուռ, մտավ ներս։

Պառավն է, օր ղբաղրկան տեսավ, ալապ-զալապ հ՝էլավ օր էրթեր, գլորվավ թարանճեսներուց, հ՝ընկավ ցած, մեռավ, նոր ախչըկա յախեն ազատավ պառվու ձեռքեն։

Աստծուց հ՝իջավ իրեք խնձոր. մեկ՝ ասողին, մեկ՝ լսողին, մեկ լէ՝ ջաղամաթին։